ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/08

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 21.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21367-2019 գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 20.12.2019թ. թիվ Ե/40/3237-19 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ 26/26-1/21367-2019 նախաձեռնել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

2018թ. սեպտեմբերի 25-ին «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է պաշտպանիչ միջոցների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2019թ. թիվ Ε/40/3092-19 գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.-րդ և 8.9 կետերի պահանջները:

Այնուհետև, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.12.2019թ. գրությամբ ներկայացրել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 06.12.2019թ. թիվ Ε/40/3092-19 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.7.-րդ և 8.9 կետերի պահանջները, ըստ որի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը երկու դեպքերից մեկի առկայության դեպքում, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել և 8.9 կետով՝ Պատվիրատուն պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի միջև կնքված պաշտպանիչ միջոցների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից

միակողմանի լուծվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Դեռևս 14.12.2018թ. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ ապրանքը, այն է՝ 3000 հատ հատուկ կոմբինիզոնները, որի վերաբերյալ նույն 14.12.2018թ. դուրս է գրվել նաև հաշիվ-ապրանքագիր թիվ 1741259000:

Վերը նշված հանգամանքը փաստվում է նաև «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից 11.01.2019թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ, որով ՍՊԸ-ն հայտնել է, որ մատակարարել է պայմանագրով նախատեսված ապրանքները, սակայն իր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ արտիկուլի մասով առկա է անհամապատասխանություն և ՍՊԸ-ն առաջարկում է Պատվիրատուին այն ընդունելու դեպքում վճարել 7.560.000 ՀՀ դրամի փոխարեն 4.500.000 ՀՀ դրամ, իսկ եթե ընդունելի չէ Պատվիրատուի համար, ապա հնարավորություն տալ մինչև 2019թ. փետրվարի 20-ը մատակարարել անհամապատասխանությունը վերացրած կոմբինիզոն: Նշված նամակին մինչ օրս չկա որևէ պատասխան:

Վերը նշված հանգամանքի հետ կապված, ստանալով պատասխան, ՍՊԸ-ն 21.01.2019թ. իր էլ. հասցեից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ խնդրել է Պատվիրատուին տրամադրել ժամանակ և կազմակերպել հանդիպում ՍՊԸ-ի հիմնադիրի տնօրենի և կոմերցիոն բաժնի տնօրենի հետ, սակայն նորից անպատասխան:

Այնուհետև, գրեթե մեկ տարի չստանալով արձագանք մատակարարված ապրանքի և ուղարկված գրությունների վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 06.12.2019թ. թիվ Ε/40/3092-19 գրության հետ Ընկերության կողմից /այսինքն մինչև ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգ նախաձեռնվելը/ 09.12.2019թ. գրություն է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին՝ հետևյալ բովանդակությամբ.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված թիվ 01/251 (ծածկագիր՝ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18) պայմանագրով՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն 14.12.2018թ. մատակարարել է թվով 3000 հատ հատուկ կոմբինիզոն, որոնց ընդհանուր գումարը կազմում է 7,560,000 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով թվով 3000 հատ հատուկ կոմբինիզոնների մատակարարումը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է ներկայացվել պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-

ընդունման արձանագրությունը: Այնուհետև, 14.12.2018թ. նշված մատակարարման մասով դուրս է գրվել 7,560,000 ՀՀ դրամի հարկային հաշիվ: Սակայն 14.12.2018թ. սկսած մինչ օրս «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված նշված ապրանքի դիմաց «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից որևէ վճարում չի կատարվել, իսկ ապրանքը ետ չի վերադարձվել: Այնուհետև, «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին 06.12.2019թ. ուղղված Ձեր թիվ Ε/40/3092-19 գրությամբ հայտնել եք, որ միակողմանի լուծում եք «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված թիվ 01/251 (ծածկագիր՝ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18) պայմանագիրը: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2018թ. մատակարարված թվով 3000 հատ հատուկ կոմբինիզոնների դիմաց դուրս գրված գումարը մինչ օրս չի վճարվել, և միևնույն ժամանակ մատակարարված ապրանքը չի վերադարձվել: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից թիվ 01/251 (ծածկագիր՝ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18) պայմանագիրը միակողմանի լուծելու փաստը՝ խնդրում ենք գրավոր հայտնել, թե «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ինչ կարգով և ինչ ժամկետում կվերադարձվեն «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2018թ. մատակարարված թվով 3000 հատ հատուկ կոմբինիզոնները:»:

Վերոհիշյալ գրության արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 18.12.2019թ. կապ է հաստատել ՍՊԸ-ի ներկայացուցչի հետ՝ խնդրել ներկայացնել ՍՊԸ-ի վարորդ Արթուր Խեչումյանի անձնագրային տվյալները, որպեսզի կազմվի անցագիր՝ ՍՊԸ-ի կողմից մատակարարված 3000 հատ հատուկ կոմբինիզոնները ետ վերադարձնելու համար:

Վերոհիշյալ փաստական հանգամանքները հիմնավորում են, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել ոչ սահմանված ժամկետում ապրանք չմատակարարելը, քանի որ ապրանքն ընունվել է Պատվիրատուի կողմից դեռևս 2018թ. դեկտեմբերին, և երկրորդ, չի կարող արձանագրվել անպատշաճ որակի ապրանքի մատակարարման փաստ, քանի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՍՊԸ-ին չի ներկայացվել որևէ եզրակացություն ապրանքի անպատշաճ որակի վերաբերյալ:

Վերոհիշյալ պայմանագրի լուծման գրությամբ Պատվիրատուն նշել է, որ պայմանագիրը լուծում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը: Ինչպես արդեն նշվել է, համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Միևնույն ժամանակ, պայմանագրի 2.1.7.1 հստակ սահմանում է, թե Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական որ դեպքերում է համարվում, դրանք են՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Այսպիսով, պայմանագիրը լուծելիս՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն առնվազն պարտավոր է նշել, թե Վաճառողի կողմից պայմանագրի կոնկրետ ինչ էական խախտում է թույլ տրվել ՍՊԸ-ի կողմից՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, թե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել: Ակնհայտ է, որ այս երկու հիմքերը միաժամանակ չեն կարող առկա լինել: Սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի մատնանշվել, թե կոնկրետ որ հիմքի առկայությունն է հանգեցրել այս պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչը նշված պայմանագրի լուծումը դարձնում է ոչ իրավաչափ և կամայական:

Վերը նշված պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 06.12.2019թ. թիվ Ε/40/3092-19 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով նաև սույն Պայմանագրի 8.9-րդ կետի պահանջները:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ կարելի է փաստել, որ կողմերի միջև կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել www.gnumner.am կայքում «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, չնայած հիմքերում առկա փաստաթղթերի մեջ առկա է արտատպում, որում որպես բաժնի վերնագիր գրվել է Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ, սակայն բավարար է ուսումնասիրել www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժինը, որպիսի պայմաններում կհայտնաբերվի որ այդպիսի ծանուցում այդ բաժնում ընդհանրապես առկա չէ:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 8.9 կետի դրույթով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ/:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վերը նշված հիմնավորումը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի որոշման մեջ, որի արդյունքում ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի մերժվել են և «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «Արտ Պլաս» ՍՊԸ-ն չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից սույն գործի շրջանակներում թույլ են տրվել բոլոր սահմանված ժամկետների հնարավոր խախտումները: Այսպես.

- Պայմանագիրը կնքվել է դեռևս 2018թ. սեպտեմբերի 25-ին:
- Պայմանագրով նախատեսված ապրանքը ՍՊԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին մատակարարել է դեռևս 14.12.2018թ.:
- «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղղված բոլոր գրությունները մնացել են անպատասխան:
- 2018թ. սեպտեմբերի 25-ին կնքված պայմանագիրը միակողմանի լուծվել է միայն 06.12.2019թ., այսինքն ապրանքը մատակարարելու հետո գրեթե մեկ տարի անց:
- Թիվ ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգը նախաձեռնվել է 13.01.2020թ.՝ հիմքում դնելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը 20.12.2019թ. ուղղված Ε/40/3237-19 գրությունը:

Պայմանագրի միակողմանի լուծման հիմք հանդիսացած 2.1.7.-րդ կետով սահմանվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել, հետևաբար եթե «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն Պատվիրատուին մատակարարած չլիներ համապատասխան ապրանքները, ապա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն դեռևս «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի հնարավորություն ուներ լուծելու դեռևս 2018թ. դեկտեմբեր ամսին, միչդեռ անհասկանալի պայմաններում «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով պայմանագիրը լուծելով մեկ տարի անց՝ 2019թ. դեկտեմբերին և

հիմքերն էլ ուղարկելով 2020թ. հունվարին՝ բաց է թողել Պայմանագրի 2.1.7 կետի հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքը:

Իսկ այնուհետև, 06.12.2019թ. լուծելով պայմանագիրը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հիմքերը ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 20.12.2019թ.՝ դրանով էլ խախտելով Կարգի 45-րդ կետի պահանջները:

Վերոհիշյալը հանգեցրել է մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար սահմանված ժամկետների խախտմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՑ-ԼՕ-2019/233 և ՍՑ-ՆԳ-2019/195/, որի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակրգի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը: ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են

կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը): Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին: Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության

խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:20-ին և 23.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 23.01.2020թ. ժամը 10:10-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.12.2019թ. թիվ Ե/40/3237-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 10.08.2018թ. թիվ 3.4 որոշմամբ 13-րդ չափաբաժնի համար Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս հետ 25.09.2018թ. կնքվել է թիվ 01/251 պայմանագիրը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից թիվ 01/251 պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել (չի մատակարարվել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող թվով 3000 հատ հատուկ կոմբինիզոն), Պատվիրատուն միակողմանի լուծել է Ընկերության հետ 25.09.2018թ. կնքված թիվ 01/251 պայմանագիրը, որի մասին Ընկերությանը տեղեկացվել է 06.12.2019թ. թիվ Ե/40/3092-19 գրությամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:20-ին և 23.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ապրանքի մատակարարման թիվ 01/251 պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված պաշտպանիչ միջոցները (հետայսու՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2019թ. թիվ Ե/40/3092-19 գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21367-2019 գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 20.12.2019թ. թիվ Ե/40/3237-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ապրանքի մատակարարման թիվ 01/251 պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով,

ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված պաշտպանիչ միջոցները, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուին մատակարարել 3000 հատ «Կոմբինիզոն, հատուկ PLUS Mytex» ապրանքը:

Համաձայն գործում առկա նյութերի՝ 14.12.2018թ. Ընկերությունը Պատվիրատուին մատակարարել է 3000 հատ հատուկ կոմբինիզոն, որի վերաբերյալ կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որը սակայն հաստատված է միայն Ընկերության կողմից և դուրս է գրվել թիվ Ա1741259000 հարկային հաշիվը, որը նույնպես հաստատված չէ ստացողի կողմից:

Համաձայն գործում առկա Պատվիրատուի կողմից 27.12.2018թ. կազմված թիվ 529 մուտքային վերահսկողության ակտի՝ Ընկերության կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում ԱՃԹԹԱ-ի ներկայացրած պայմաններին, ուստի ապրանքն ենթակա է վերադարձման մատակարարին:

Պատվիրատուին ուղղված 11.01.2019թ. գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրի համաձայն մատակարարվել է ապրանքը, սակայն մատակարարման ընթացքում պարզվել է, որ մատակարար գործընկերն ուղարկել է ուրիշ արտիկուլի հատուկ կոմբինիզոններ, որոնք կիրառելի են ատոմային կայաններում, սակայն որոշ պարամետրերով չեն համապատասխանում մրցույթի հրավերով պահանջվող հատուկ կոմբինիզոնների տեխնիկական բնութագրին: Ընկերությունը պատրաստ է արդեն իսկ մատակարարված ապրանքը տրամադրել ավելի ցածր գնով:

Ընկերությունը նաև խնդրել է տալ հնարավորություն մինչև նույն թվականի հունվարի 20-ը մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանք, որը համապատասխանում է տեխնիկական բնութագրին:

Պատվիրատուին ուղղված 22.05.2019թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է տալ հնարավորություն ապրանքի մատակարարումն երեք ամսվա ընթացքում կազմակերպելու համար:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ ընդառաջելով Ընկերության խնդրանքին, Պատվիրատուն Ընկերությանը հնարավորություն է ընձեռնում ապրանքը մատակարարել մինչև 30.11.2019թ., հակառակ դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստիպված կլինի լուծել Պայմանագիրը:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2019թ. թիվ Ε/40/3092-19 գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:</u>

Այսպիսով՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն ստանձնել է իր և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին համապատասխան քանակի ապրանքներ մատակարարելու պարտականությունը: Պատվիրատուն Ապրանքի մատակարարման ժամկետ սահմանել է 30.11.2019թ.: Միևնույն ժամանակ Պայմանագիրը պատվիրատուի կողմից լուծվել է 06.12.2019թ.: Պայմանագրի 2.1.7.1. «բ» պարբերությամբ սահմանվել է, որ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի: Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ ապրանքի

մատակարարման ժամկետը փաստացի սահմանվել է 30.11.2019թ., իսկ պայմանագիրը լուծվել է 06.12.2019թ., որի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրի վերոհիշյալ կետի խախտման փաստը, քանի որ Պայմանագիրը լուծվել է մինչև Պայմանագրի 2.1.7.1. «բ» պարբերությամբ նախատեսված 30 օրացուցային օրը լրանալը:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21367-2019 գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ